

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԳ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խորագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
Եւրոպայի բառին 2 կոպեկով.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐՎԱՅ 1899 ԹՎԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԳՍԳԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՄՇԱԿԸ, ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍՍՀՄԱՆՆԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե ռ ի կ ա յ ի բ ա ժ ա ն օ ղ ը ն երբ պ է տ ար է վ ճ ա ը ն տ ար ե կ ա ն 6 ղ օ ղ լ ար. Ս լ ը օ ղ ա յ ի բ ա ժ ա ն օ ղ ը ն երբ՝ 30 ֆրանկ. Պ ար ս կ ա ս տ ա ն ի բ ա ժ ա ն օ ղ ը ն երբ՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻ» գրվել կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆԸ (Բաղարայան և Բարձրակայան փողոցների անկիւնը):

Կարողանալու օրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գրվել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“; իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK»:

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Կ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԳՎՈՒԹԻՒՆ

Պատուած դիմակներ. — ՆԵՐՎԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մառու. Դատաստանական դահլիճից. Նամակ ձեռքայինի գաւառից. Նամակ Ախալցխայից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խըմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀՆՈՒՂՈՒՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Աղբատները գաւառներում:

ՊԱՏՈՎԱԾ ԴԻՄԱԿՆԵՐ

Անգլիական գործիչները հեռագրեան դէն են գտնում իրանց դիմակները, հեռագրեան բաց են անում իրանց իսկական դէմքերը: Այլ ևս չը կայ «մեծ ծերունին», որը տաս-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՂԲԱՏՆԵՐԸ ԳԱՌԱՆԵՐՈՒՄ

Վերջին ժամանակներս, մանաւանդ այս 3—4 տարվայ անընդհատական պատճառով, գաւառներում աղբատները մեծ թիւ են կազմում: Նրանք, գրկված նիւթական ամեն միջոցից, ստիպված են մուրացկանութեան դիմել՝ իրանց բնական զոյրութիւնը պահպանելու համար: Գոյութեան կուր մէջ նրանք այլ ևս սեփական ոյժի տէր չեն. ընկնելով ինքնուրոյն կերպով ապրելու ոյժից, այդ աղբատները, ընկնելու են նաև բարոյական տեսակէտից—պատուաբութիւնից, չը նայելով, որ նրանց թլուտ գտնվում է և մի որոշ գասակարգ, որը ոչ մի կերպով չէր համաձայնվի՝ ձգտել այդ անպատու բեր դրաժուներին, որ կոչվում է մուրացկանութիւն:

Մեզանում սովորաբար մուրացկանութեան ցուպը ձեռք են առնում կոյրերը, կաղերը, խեղճանները և այլ աշխատանքի անակտէ մարդիկ: Իսկ արդէն յայտնի մի իրողութիւն է, որ այդ գասակարգը աշխատանքի անընդունակ է հանդիսանալու, ուստի և մուրացկանութիւնը նրա համար ապրուստի մի անհրաժեշտ միջոց է դառնում, երբ նրան ոչ մի կողմից չօգնակելի օգնութիւն չէ հասնում: Բայց այժմ այդ հաշմանդանների, այսինքն իսկական մուրացկանները թլուտ գտնվում են հարկաւոր մարդիկ,

նեակ տարիներ ընթացքում բարձր էր պահում արդարութեան, քրիստոնէութեան դրօշակը և իր շանթահար ձառնով եթէ չէր ոչնչացնում, գոնէ ամաչեցնում էր քաղաքական կեղծաւորութեան, շովինիզմի, շահամի խնդրների ներկայացուցիչներին, որոնցով այնքան հարուստ է անգլիական դիպլոմատիան և որոնց անուշով այնքան յանգանքներ են կատարվել աշխարհի զանազան կողմերում: Դեռ մի տարի չը կայ, որ այդ ձշմարիտ մարդը գերեզման մտաւ և շահ լորդ Բոգրէրին, որ նրա ձեռքից ընդունեց առաջին միջնորդի պաշտօնը, իր շքեղ զբօսանուով երևաց Բոսֆորի ջրերում, ուղիղ սուլթանական պալատի դիմաց: Իսկ մի Նշմեզ

որոնք, աղբատացած՝ ձեռք են մեկնել մուրացկանութեան, և որոնք անպայման ընդունակ են աշխատելու, եթէ միայն գործ տրվի նրանց: Արդարև այդ գասակարգից շատերը գարնանը և ամառը թէև վարձվում են իբրև ժլակներ՝ չինութիւններ չինում, քաղերու, կատերու և այլ աշխատութեան համար՝ 30—40 կոպեկ օրավարձով, սակայն նրանց այդ գործը շուտ վերջանալով՝ դարձեալ մնում են պարագ, ձեռնուռայն. կրկին մատնվելով անգործութեան, այդ բանտերները դարձեալ մնում են սոված, դարձեալ անօթիւ. և ահա իրանց սովալուրով ընտանիքը քաղցը յագեցնելու համար նրանք, կորկին ուսին գցելով աղբատի տարակեր՝ դուրս են գնում մուրացկան: Նրանք քաղաքներին և գիւղաքաղաքներին շուկաներում ժողովում են Եսև փողը՝ 1—2—3 կոպ., իսկ գիւղական ընտանիքներում ալիւր, թխած ճաց և ցորեն. գիւղացու ողորմութիւնը, համեմատած քաղաքներում հաւաքածի հետ, կրկնապատիկը կարելի է համարել, որովհետև գիւղացու տուածը, եթէ հացահատիկ է կամ ալիւր, անշուշտ 1—2 ֆունտ կը կշռէ, որը կարժէ 3—5 կոպ., իսկ ճացը՝ 2—3 կոպ.:

Աղբատների թլուտ կայ մի որոշ գաս, որ մտնում է ամբողջ ընտանիքով՝ թլուտ մի քանի հոգի.—կինը առանձին, հայրը առանձին, տղան և աղվիկը առանձին և այլն: Կան նաև այնպիսիներ, որոնք, ինչպէս յայտնի է, ակամայից ստիպված են աղբատութիւն անել: Այդպիսիները ամօթից, որպէս զի տեղական ժողովրդի աչքից հեռու մնան և չը ձանաչեն դրացիներէն, անցնում են գիւղեր, գաւառներ և այնտեղ շարունակում են իրանց ժողովարարութիւնը մի որոշ ժամանակում և ապա բեռ-

Քարտէս չէ կամ Բիկոնսֆիլդի սաներից մէկը: Պարմերսոնի մահից յետոյ Անգլիայի ազատամիտ կուսակցութիւնը գոնէ հեռու էր պահում անգլիական այն անջնջելի ակտիւց, որի անունն է Թիւրքիայի պահպանութիւն: Այդպէս էր նա, քանի որ Գլադստօնի պէս պարագլուս ունէր: Բայց այժմ...

Ստուժ եւս, թէ անձնաւորութիւնները պատմութեան ընթացքի վրա չեն ազդում: Բայց ինչպէս է, որ անգլիական ազատամիտ կուսակցութեան նախկին առաջնորդը ուխտագնացութիւն է կատարում դէպի այն պալատը, որի մէջ ապրողի արարքները չորս հինգ տարի Անգլիայում սարսափի և բողոքների միահամուռ աղաղակ էին բարձրացրել: Լորդ Բոգրէրին 1894-ին առաջին միւնիստր էր և իր գործողութիւններով ցոյց էր տալիս, որ Նյուքոմֆիուսի հետ բարեկամութիւն անելուց շատ հեռու է: Նա միջամտեց, ըէֆօրմիներ ճրագիր առաջարկել տուեց և, ինչպէս արդէն ապացուցել է «Սուլթանը և Պետութիւնները» գրքի հեղինակը, պատճառ դարձաւ, որ թիւրք կառավարութիւնը արիւնտու միջոցներ ձեռք առնէ այդ ըէֆօրմիները ոչնչացնելու համար: Մինչև այդ՝ Բոգրէրին իր միւնիստրութեան հետ օտարակցեց այնպիսի հանգամանքների մէջ, որոնք ցոյց էին տալիս թէ ազատամիտները կողքից են իրանց ամբողջ հեղինակութիւնը:

Սուաջին միւնիստրի պաշտօնն անցաւ Սոյբելըրին, որ շարունակեց, նոյն իսկ աւելի մեծ եռանդով, իր նախորդի քաղաքականութիւնը: Թիւրքիան ուժեղացած էր այս հռչակած դիպլոմատի արտասանած բառերով: Ամբողջ Անգլիան միաբերան ստամ էր, թէ ինքը պիտի քաշէ իր նախկին յանցանքները, անկեղծօրէն զղջում է անցեալի վրա և պատրաստ է սրբել իր վրայից Գրիֆ պատերազմի, Կիպրոսի դաշնակցութեան կեղտերը: Բայց կայաւ զձառական րօպէլ և այդ ժամանակ յայտնի դարձաւ, որ անգլիական առիւծը փայտի ոտներ ու մտի առանցք է ունեցել այն հարցի վերաբերմամբ, որը նա

նաւորված իրանց այդ պարագլուսները արդիւնքով տուն են վերադառնում:

Անկապած, աղբատներից շատերը, ընտելանալով մուրացկանութեան թէև անպատուներ, բայց իրանց մտքով թեթև արեւտին, ինչպէս փաստերը ցոյց են տալիս, փախչում են աշխատանքից, չը նայած որ նրանք գործուկ ընդունակ են: Փախչում են մանաւանդ այն յոյսով, որ ծայրայեղ դէպքում, երբ բոլորովին սովի դուրս հասնեն նրանց օգնութեան կը գան բարեգործական և այլ ընկերութիւնները:

Ինչպէս ասեցի, մուրացկանների թլուտ մենք տեսնում ենք այնպիսիներին, որոնք բոլորովին ընդունակ են օգնատութեան, սակայն աշխատանք ձեռք չէ ընկնում: Եթէ ուղում ենք վերջնականապէս ազատվել մուրացկանների ճնշող ներկայութիւնից և հեռացնել նրանց մեր դռներից, պէտք է նրանց աշխատանքը հայթայթենք: Դա կը լինի անշուշտ զբարի գործ՝ մեր կենսութեան և հասարակութեան նախաձեռնութիւնը հասած կը լինի իր բարոյական ցանկալի նպատակին: Աշխատանք տուէք աղբատ—մուրացկանին, ստեղծեցէք նրա համար գործելու և ապրելու մի թեթև միջոց,—այն ժամանակ կը վերանայ անշուշտ մուրացկանութիւնը հասարակութեան շրջանից և մենք ազատված կը լինենք այն ամբողջից, որը հարկաւոր անդամներով մաշում է մեր շէմքը:

Աղբատ—մուրացկանների համար գործ և աշխատանք տեսնելը գաւառներում աւելի հեշտ է, քան թէ մեծ քաղաքներում: Միայն հարկաւոր է, որ հրապարակ գան անձուրէր մարդիկ և նախաձեռնութիւն ցոյց տան: Գաւառական փոքրիկ քաղաքներում հիմնած աշխատութեան

յուզում էր ամենայն եռանդով: Սոյբելըրին հեռացաւ և մեծ ծերունուն մնում էր միայն հաստատել այդ փաստը՝ թէ ինքը շատ է ծերացել և այլ ևս ոյժ չունի: Նրա դէմ դուրս եկաւ իր համախոհը և զինակիցը—լորդ Բոգրէրին: Եղիւրուրդում աղիւ լորդը պատմեց ամենքին զբաղեցնող հարցի բոլոր սարսափները, յարձակվեց եւրօպական կոնցրետի վրա, ցոյց տուեց մեծ սրտայաւուլութիւն, հասկացրեց, որ պէտք է ըմբռնել դրութիւնը:

Սակայն բուն միտքը, իսկական պատճառը պարզելու համար հարկաւոր էր, որ ընէ ժամանակ անցնի: Անցան երկու երեք տարիներ: Կ. Պօլսից հեռացրվեց դեպքան Ֆիլիպ Կերրի և ահա այսօր դուրս է գալիս, որ Անգլիան ժամանակաւորապէս էր Թիւրքիայի թշնամու զինակը ծածկել: Այժմ էլի հարկաւոր է համարվում վերադառնալ հին քաղաքականութեան, այսինքն թիւրքական բարեկամութեան և այդ պատճառով լորդ Բոգրէրին ուխտագնացութիւնը դէպի Նյուքոմֆիուս պալատը բաւական հասկանալի է դառնում: Ինչպէս յայտնի է, անգլիական ազատամիտ կուսակցութեան մեծ մասը այժմ պահպանողականներից շատ չէ զանազանվում, քանի որ առողջվել է ինպերիալիզմի գաղափարով: Առտի այդ կուսակցութեան ազդեցիկ անդամներից մէկի և լորդ Սոլլբելըրի մէջ շատ բնական է, որ կատարեալ համարձակութիւն լինի: Եւ այդ մենք տեսնում ենք այն հանգամանքից, որ ինքը, Սոյբելըրին, նոյնպէս աշխատում է «հաշտվել» Թիւրքիայի հետ, իսկ անգլիական դեպքանը Նյուքոմֆիուս պալատում քաղցրիկ, հաճոյական յայտարարութիւններ է անում իր կառավարութեան անունից: Եւ ինչ կապած, Անգլիան կանէ իր կամեցածը, քանի որ Թիւրքիան այնպէս կարօտ է փողի և մանաւանդ չէ ուզում նոյն իսկ անուանական թշնամիներ ունենալ:

Եւ այժմ քաղաքական աշխարհը այլ ևս չի գարմանալ տեսնելով Անգլիային նրա համար օտարտու դերի մէջ: Այսուհետև նա ցոյց կը տայ, որ ժամանակաւոր շեղումից յետոյ, նա չը կարողացաւ դիմակը

տները շատ օգտաւէտ կը լինին այդ կողմից: Գաւառներում, որտեղ աշխատութեան և զանազան արեւտների պաշարը շատ է, քան մեծ քաղաքներում, կան հետեւալ պարագլուսները—բոլոր թեթև մանկ, որոնք և գործել գուրպաններ, չուխացու շալեր (որ գիւղացիք հագնում են), չուխեր, կարպետներ, գորգեր, խուրճիկներ, թեւեր, չուխեր, և այլն: Կարելի է չորեք, զբտակներ (մարթոց), ոտնամաններ (սոյ, չուստ, տրեխ, բաշմակի և այլ տեսակ կոշիկներ): Դեռ չենք խօսում ատարձագործութեան և երկաթագործութեան մասին, որ վերջերս մեծ զարկ է ստացել ամեն մի յետ ընկած քաղաքում և աւանում: Իսկ ինչ վերաբերում է արեւտների սովորեցնելուն աշխատութեան,—այդ դէպքում կարող են վարձել մի մի հոգի առանձին վարպետներ, որոնցից շատերը անգործ-պարագլուսներ են քաղաքներում և որոնք անպայման յանձն կառնեն ամսական 5—6 ռուբլիով իրանց արեւտը տարածել աշխատանքի տան մէջ:

Եւ պէտք է ասել, որ վերջ յիշված արդիւնքները թէ իսկոյն կը ծախվեն տեղիւնտեղը և թէ կարտասանվեն աւելի վաճառաւոր քաղաքները, որտեղ մեծ վաստակով առձեռն փող կարող են դառնալ: Այժմ ոչ մի տեղ չէք գտնի այնպիսի առարկաներ կամ արեւտագործական նոյն իսկ ոչ-կատարելագործված արդիւնքներ թիւրքներ, որ մնան ամիսներով առանց վաճառահանվելու: Ընդհակառակն, այժմ իւրաքանչիւր գաւառում, ամեն մի արեւտագործական արդիւնք, ամեն մի ձեռագործ իր պատրաստի սպառողն ունի: Իսկ այդ ձեռագործների պաշարը, այն է բուրլը, մորթին, կաշին և այլ միջոց-

պահել իր դեմքը վրա և դիմում է նոյն ճանապարհին, որի վրա տասնեակ տարիներ անգլիական իմաստութեան հիմք էր համարվում պահպանել Ռուսերին, պահպանել բոլոր միջոցներով, չը խնայելով արևել, ինչպէս 1855-ին և ոչ զրամ, ինչպէս 1877-ին: Բոլոր հաշիւներին, բոլոր գաղափարներին մէջ վերջ է վերջոյ էլի գլուխ բարձրացրեց անգլիական ապրանքի հակա: Կիմախները պատուելիցն և այժմ ոչ զի համար գաղտնի չէ, թէ ինչու Պալմերստոնները, Բիկոնսֆիլդները յայտարարներ յանդիման սկսեցին ուրիշ օտարախերքեր երգել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Կանանց ազատութեան թշնամիները շատ են սիրում շահագործել այն հանգամանքը թէ կիրք թող արարած է, ֆիզիքական կազմուածքի կողմից արտաբնական ցած է, դիմացկուն չէ և այլն: Ասան ինչ է ստան այդ մասին Պաօլո Լոմբրոզո «НОВОСТИ» լրագրի մէջ:

Տղամարդիկ մինչև վերջին ժամանակները կենսական մէջ ամեն բան կարգադրում էին իրարայն սեռի օգտին: Այս նպատակով նրանք յորինում և հրատարակում էին օրէնքներ և յետոյ փոփոխում էին նրանց կամ լրացնում: Զարմանալի չէ, որ վերջի վերջոյ տղամարդիկ կանանց իրանց համար ակոթիքի եղբայրացութեան թէ իրանք ուժեղ սեռն են և իւրացրին, իբրև բնական իրաւունք, ետանդիլ, ոյժի և գերազանցութեան բոլոր յատկութիւնները, իսկ կնոջը զիջողաբար յատկացրին թող սեռի անուր: Նրանք յայտարարեցին թէ կանայք խելոք, օրային արարածներ են, որոնք կարող են համակրութեան և պահպանութեան ու միշտ պէտք է պահել նրանց բազմակողմանի ինտանակարութեան տակ:

Այսպէս ընթացիկ օրէնքն է, մի սեռի ըմբռնած հակադրութիւնը: Բայց վէճ է յարուցված այդ օրէնքի դէմ: Ո՞վ պէտք է լուծէ հարցը:— Ի հարկէ, բնութիւնը, նա, որ ստեղծել է թէ տղամարդն և թէ կնոջը:

Բնութիւնը, այս վկան, որին այնքան յաճախ կանչում էին տղամարդիկ և որը այնքան շատ բաների է դիմացում—բոլորովին հակում չէ ցոյց տուել համաձայնելու տղամարդկանց այդ հայեացքին: Իր յատուկ նպատակների համար, գոնէ իր այն նպատակների համար, որոնց վրա նա որ և է խորհրդարար ծածկոց չէ ուղում ցցել, որովհետև վարվում է այնպէս, ինչպէս պահանջում է արդարութիւնը և պատրաստ է բաց անել իր գրեթե ու ցոյց տալ իր շահերը:—այդ բնութիւնը, հակառակ տղամարդկանց վճռի, կամեցել է որ կիրք ոչ մի կերպով ստոր չլինի տղամարդից իր օրգանիզմով: Թոյլ տալով, որ տղամարդիկ ըստ իրանց բարեհայեցողութեան կանանց անուանեն թոյլ սեռ, բնութիւնը կանանց տուել է ուժեղ սեռի կազմակերպութիւնը, որ, յամենայն դէպս, տղամարդու կազմուածքից ակել ուժեղ է:

Այդ բանը հաստատելու համար Պաօլո Լոմբրո-

զօ դիմում է յայտնի պրօֆէսոր Շէնկի և ուսուցիչական Օրշանսկու հետազոտութիւններին: Եւ ինչ է դուրս գալիս: Ազդեալ ծնունդը դրամատուրիւն է համարվում, մինչդեռ դա ուրախալի երևոյթ պիտի լինէր: Ազդելի ծնունդ է այն ժամանակ, երբ միջավայրի բոլոր արտաքին հանգամանքները, ընտանիքի տնտեսական դրութիւնը և յարաբերական դրութիւնը լաւ են, և ծննդեան բուրբուն աղիւկը, տղայի հետ համեմատած, աւելի զարգացած և կատարեալ էակ է ներկայացնում: Ենց այն պատճառով, որ նա աւելի բարեխաղով հանգամանքներին ծնունդ է: Ազդելիները աւելի երկարակեաց են, աւելի քիչ են մեռնում քան տղաները: Սովից, պատերազմից և առհասարակ աղէտներից յետոյ ծնված տղաները թիւը աղիւկների թիւից շատ է լինում: Զրնայած այն սարսափելի տանջանքներին և վերանայած այն սարսափելի կնոջը մայրութիւնը, նրա կենսի միջին տևողականութիւնը աւելի մեծ է, քան տղամարդիցը: Բայց կայ և աւելի մեծ գերազանցութիւն: Եթէ ընտանիքի մէջ հայրը թողալիս ունի, աւելի մեծ շանք կան, թէ նա այդ հիւանդութիւնը ժառանգութիւն կը թողնէ իր պալակներին, մինչդեռ եթէ մայրն է թողալիս իր հիւանդ, այդ դէպքում հիւանդութեան անցնելը ժառանգներին աւելի քիչ շանք ունի:

Կիրք ընտանիքում այնքան մայրութիւն ունի, որ նրա օրգանիզմի մէջ ամեն ինչ ուղղված է մի նպատակի, ամեն ինչ կենտրոնացած է այն բանի վրա, որ օգնէ երեխաների զարգացման և նրանց կենսաբան պահպանելուն: Եւ հետևանքն այն է, որ նա հեռացնում է ժառանգական հիւանդութիւնների վտանգը: Այդքան զարմանալի է կանանց օրգանիզմը և մի այլ ընդունակութիւնը, որին մենք մեծ նշանակութիւն չենք տալիս լոկ այն պատճառով, որ նա արտայայտվում է ամեն օր: Ինչպէս է, որ կիրք ընդունակ է իր արիւնը կաթ դարձնել, այն էլ այնպիսի կաթ, որ ունի առանձին յատկանիշներ— յայտնի քանակութեամբ չաքար, կալցիւն, ջուր, և որը աւելի և աւելի սննդարար է դառնում, նայած երեխայի հասակին: Եւ արդէս երեխան իր զարգացման բոլոր անտիճաններում ստանում է նոր, յարմար, քանակաբար և յայտնաբար փոփոխվող կերակուր:

Այսպէս ահա, տղամարդկանց ձեռքից դուրս է ստանում և այն միակ զէնքը, որ կար մինչև այժմ: Կրտսի թիւը, ի հարկէ, աւելի ևս կը զարգացնէ այս փաստերը, աւելի բազմակողմանի և առատ վկայութիւններով կը հաստատէ նրան: Այնուհետև ինչ պիտի ասեն կանանց հարցի հակառակորդները...

ԳՍՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳԱԶԼԻՃԻՑ

Նրէկ, մարտի 23-ին, Ռիֆիլի դատաստանական պալատում ընկնելը երեք գրական գործ: Առաջինը ընկնելը «ՄՂԱՅ» լրագրի խմբագիր Ա. Քալանթարի և մշտական աշխատակից Հ. Առաքելեանի գործը: Ինչպէս յայտնի է մեր ընկերացիներին, Ղարաբաղի կոնսուլարին, ի դէմս Սաթուրեանի Գարեգին վարդապետի, որ որտեղ գոյութիւն ունենայ աշխատանքի տունը, որը աղքատ դասակարգին գործ և օրական ապրուստ կը մատակարարէ, այնտեղ տեղական ունեւոր ազգաբնակիչները նոյնպէս իր կողմից օգնութեան կը դա: Ահա թէ ինչպէս:—Յայտնի է, որ վերջին տարիների անաշուղ բերքերի պատճառով, ինչպէս յօդուածիս սկզբում ասեցի, ամեն տեղ անազին թուով մուրացկաններ են լսյս ընկել, որոնք առաւօտից մինչև երեկոյ հարեւրաւոր տներ են մտնում և որդմութիւն խնդրում: Ընդունելով, որ իւրաքանչիւր ընտանիք կամ խնամութ օրական եթէ 1—2 հոգի աղքատ-մուրացկան այցելու ունենայ, նա որդմութիւն արած կը լինի 2—3 կօպ, որը տարվայ ընթացքում կը հասնի 7—10 ռ. *): Իսկ եթէ այդ գումարը կէս անհիւր (4—5 ռ.) է մի կամ մի օր որոշ տուրք պահանջներ տարվայ ընթացքում այդ ընտանիքներից և խնամութաններից, —նրանք ուրախութեամբ յանձն կանեն վճարելու այդ գումարը յօդուած աշխատակրութեան տան, այն յոյսով մանաւանդ, որ ընդմիջ տաղուած կը լինեն մուրացկանների ներկայութիւնից, որոնք ամեն օր, ամեն քօպէ ընտրի գայտովն են բերում իրանց աղերսական-ողբերդական դրութեամբ...

Որդմութիւն տալով աղքատին, կրկնում եմ, մենք մեր տուած կօպկներով ոչ մի զգալի օգնութիւն չենք հասցնում նրա կարիքներին և ոչ մի կողմից վերջնականապէս չենք անջրձմ նրա նիւթական և բարոյական ցաւերը, այլ աւելի ևս

* Ընկերական գեղարկան ընտանիքի տուածը 1—2 Ֆ. հարցառողի օրական տարվայ ընթացքում լինում է մօտ 15 ռ., իսկ գեղարկան համար դա անհկատելի է:

տի և երեք քանակայ անդամներ, 1896 թ. հոկտեմբերին զանգատ էր ներկայացրել դատաստանական պալատին, պահանջելով, որ Ա. Քալանթար և Հ. Առաքելեան ենթարկվեն քրէական պատասխանատուութեան մեղադրվելով պատճական օրէնքների 1039 յօդուածի համաձայն, զի ֆիզիքական մէջ, ի նկատի ունենալով, որ Հ. Ա. տղագրել է «ՄՂԱՅ» լրագրի 1896 թ. հոկտեմբերի 87-ի մէջ մի նամակ, զորում Գանձասարից, և որի բովանդակութիւնը վերաբերական է չօչափում է վարդապետի և երեք քանակայների պատիւն ու բարի համբար: Պատճական օրէնքների 1039-րդ յօդուածը կամ մեղադրանքը զի ֆիզիքական մէջ, ինչպէս յայտնի է, մեղադրողներին իրաւունք է տալիս վկայութիւն տալ դատարանում, իսկ մեղադրողներին զրկում է իրաւունքից հերքելու մեղադրանքը վկայների ցուցմունքներով, այլ թող է տալիս պաշտպանվել միայն զրաւոր փաստերի հիման վրա: Կոնսուլարիայի կողմից ոչ որ ներկայ չէր պալատում, իսկ մեղադրողները—Քալանթար և Առաքելեան—իրանք էին պաշտպանում իրանք: Նիստը բացվելուց յետոյ, նիստապահող Փրանցով գեղարկեց, որ մեղադրվող Հ. Առաքելեան դիմել է դեռ 1897 թ. կալատին, խնդրելով տալ իրան վկայական՝ ստանալու Էլմիստին սինօդից մի քանի դօկումենտների պատճէններ, որոնք պէտք է հաստատեն թէ իր յօդուածի բովանդակութիւնը և թէ այն հանգամանքը, որ Գարեգին վարդապետ Սաթուրեան մեղադրվում է կաշառակերութիւններով, մի շարք զեղծումների և կեղծիքների մէջ և դատի է ենթարկվել սինօդից այդ յանցանքների համար. սակայն պալատը մերժել էր տալու այդ վկայականը:

Այս դեկլարացիոն յետոյ նախագահող հարցրեց Հ. Առաքելեանին, արդե՞ծք պնդում է նա իր պահանջի վրա և ստանալով դրական պատասխան, պալատը հարցրեց պ. պրօկուրորի ներկայացրութիւնը: Վերջինս յայտնեց, որ պահանջում է համարում յարգել մեղադրվողի պահանջը, քանի որ նա մեղադրվում է զի ֆիզիքական մէջ, և պահանջել սինօդից տալ հարկաւոր դօկումենտները: Գատաստանական պալատը որոշեց—յետաձգել գործը և տալ Հ. Առաքելեանին վկայական՝ Էլմիստին սինօդից դօկումենտներ ստանալու համար:

Երկրորդ գործով մեղադրվում էր զի ֆիզիքական մէջ «Григорьевъ» լրագրի խմբագիր Յուլիանիէս Թաշտարեան. նրան մեղադրում էին Գուշկի-Ռիֆիլի զարգացող ուսուցիչներ՝ Սուրենալով, Յիտայանով և Գաբրիէլէ, այս երեքը հանդիսանում էին մի և նոյն ժամանակ և վկայ, բայց նրանցից մէկը չէր եկել, ներկայացնելով վկայական ժողովրդական դպրոցների դիրեկտորից, թէ վկան պատճենական գործերով ուղարկվել է այլ տեղ: Թաշտարեան բողոքեց վերադառնալի այդ կերպարարութեան դէմ, յայտնելով, որ նա, իբրև մեղադրվող, զրկվում է հնարաւորութիւնից պաշտպանել իրան, քանի որ բացակայ վկայի ցուցմունքը շատ անհրաժեշտ է: Պալատը յարգեց այդ բողոքը և որոշեց յետաձգել գործը

սովորեցնում ենք նրան ապրելու ուրիշ աշխատանքով, զարգացնում ենք նրա մէջ ձրիակերութեան յատկութիւնը, թուլացնելով միանգամայն նրանում մարդակարի աշխատելու և ինքնուրոյն կերպով ապրելու ընդունակութիւնը: Իրան իբրև ապացոյց՝ կասեմ, որ ես շատ անգամ ակնատես եմ եղել, թէ ինչպէս աղքատ-մուրացիկներից շատերը, որոնք ֆիզիքական բուրբուն արուղջ և աշխատելու ընդունակ են, խանութներում ողորմութիւն խնդրելիս, երբ խանութպանները մերժել են, նրանք նոյն իսկ յամառութեամբ պահանջել են անպատճառ ողորմութիւն անել: Եւ ինչ էք կարծում՝ մինչև չեն աւել իրանց ստանալիք 1—2 կօպէկը՝ չեն հեռացել խանութից, չը նայելով, որ խանութպանը հայեցողով մերժում էր ողորմութիւն տալ: Գուցէ առաքելողներ լինեն, թէ աղքատ-մուրացիներից շատերը անդամաւորներ են, կոյր, խուլ, համր են և այլն, որոնք անընդունակ կը լինեն աշխատելու, բայց այդ առաքելութիւնը այնքան էլ հիմնաւոր չէ, որովհետև, ինչպէս տեսնում ենք, գաւառներում մուրացիներից ստանում և ոչ էլ մայր-գումարը, որովհետև նրանք փողը տալիս են ծածուկ, առանց մի որ և է պարտագրի: Բայց երբ պարտագրերը նրանց փողը հաւաքի մի պէս անուշ են անում, ուրախանում են, աղքատները ոչինչ չեն անում՝ դժուար դէմ է լուծւում են, նրա համար, որ եթէ հրապարակապէս պահանջելու լինեն, գուցէ ոչ որ չը հաւատայ նրանց, առաքելով, թէ աղքատին որտեղից է փողը, որ պարտք տայ ուրիշին, իրանից ունեւորին...

Գ. Արեւանեանց

ու հրամանագրեր ժողովրդական դպրոցների դիրեկտորին՝ անպատճառ ուղարկել վկայ ուսուցչին, ցուցմունքներ տալու համար:

Երրորդ գործով մեղադրվում էր զարմեալ զի ֆիզիքական մէջ «НОВОЕ ОБЩЕСТВО» լրագրի Սուրամի թղթակիցը. մեղադրողն էր Սուրամի պրիստով Տէր-Ակօպով, որ և կանչված էր իբրև վկայ: Գահիլի մէջ հայ քանակայ չը լինելու պատճառով, Տէր-Ակօպով պատրաստակամութիւն յայտնեց, որ իրան երկուցեղ օրթօգորս քանանան: Թղթակիցը մեղադրվում էր նրա մէջ, որ սուտ գրել է, թէ պրիստովը Ջորջեանցի օրը ստիպել է Սուրամի հայոց քանակային՝ կրճատել եկեղեցական ժամատացութիւնը: Պալատը, ընդհանրով գործը՝ որոշեց՝ «НОВ. ОБЩ.» լրագրի թղթակցին, որը մի և նոյն ժամանակ հայոց երկուցեղ երէցներն է, ենթարկել բանտարկութեան երկու ամսով:

ՆԱՄԱԿ ԶԵՔՐԱՅԵԼԻ ԳԱՍՏԱՌԻՑ

Հարու՞մ դիւղ, մարտի 17-ին

Նրկար ժամանակ Օձարեղ, Հարար և Քեսարաբար զիւղերը հարստահարվում էին ալիանուր ցեղի յայտնի աւազակների յարձակումներից ու կողպուտներից. այդ ցեղը, բացի աւազակութիւնից, ոչ մի արեւստ չուներ, և ապրում էր հայ ժողովրդի արեւն քրոնիքով վատտակած աշխատանքով: Յիշեալ զիւղերի հայերը մի քանի անգամ դիմել են ոստիկանութեան օգնութեանը և իրաւունք են ստացել ինքնապաշտպանութեան համար զէնք պահել: Աւազակների դէմ կուրծը գործը շատ դանաղ էր դնում, և ահա Թանձաձոր զիւղում երևան է գալիս մի յայտնի քաջ երիտասարդ, Մանաս անունով, որը իր երեք ընկերներով, որոնց անուններն են Համբարձում ու Ռոբորով (եղբայրներ) և Զաւար, ներկայանում են Զէքրայի գաւառապետին յանձն են առնում աւազակներին ոչնչացնելու համար: Աւազակները, գովելով երիտասարդների բարի ցանկութիւնը և ամեն մէկին բաւական թուով փամփուռներ ու մի-մի բերդան յանձնելով, իրաւունք է տալիս, որտեղ տեսնեն, գնդակահար անել աւազակներին:

Մանաս առաջուց հետագիւղած ու ուսուցանալիք է եղել աւազակներին բոյնը: Վերջինքով իր հետ 8 կազակ, գալիս է պաշարելու աւազակներին, բայց զրանք իմանում են և փախուտի դիմում: Թէև փախուտի ժամանակ կազակի գնդակը գետնի է զրորում աւազակապետ Աղիլին, բայց մնացած հինգ հոգիներին աջողվում է փախչելով աղաւթել, որոնք և վրձնուած են մինչև մահ կուրծ Մանասի և իր ընկերների հետ, կամ կոտորել նրանց իրանց խմբապետի վրէժը առնելով, կամ ոչնչանալ այնպէս, ինչպէս իրանց քաջ Աղիլը:

Ներկայ ամսի 12-ն էր, որ Մանասը զինված դէպի Հին-Քաղար գիւղն էր գնում գործով իսկ միւս երեք ընկերները պատուով էին դէս ու գէն աւազակներին հանդիպելու: Կէնց հասել էին Քեսարաբար զիւղի դաշտավայրը և թէ հետեւելու լինեք նրան, կը տեսնեք, որ նա ծածուկ տեղերում հանդիստ քայլում է, ինչպէս առողջ մարդ: Մի ուրիշը դիտմամբ համր է ձևանում և մենք այդ նկատել ենք, մի այլը խուրթեան է դրել իրան: Այլ բողոքը նրա համար, որպէս զի ողորմութիւն տուողների գուրծը աւելի շարժեն...

Կարևոր է ուշադրութեան առնել և այն, որ աղքատներից շատերը երբեմն ողորմութիւն են ստանում, աներբ անտեղիս՝ նրանք վերցնում-տանում են ինչ որ նրանց աչքին ընկնում է նախասենակում կամ դուրսը—կացին, ուրազ, դանակ, ափսէ, շուացած շորեր և այլ տնային իրեր: Պատահե՛ք են զկազբեր, երբ աչաւորջ տանտերերը նկատել են այդպիսի գողութիւններ, վազ տուել աղքատների յետեղ և բռնելով նրանց հանել են գողացված իրը նրանց սուրբակից: Զը մոռանանք յիշել և այն, որ ինչպէս շատերը վկայում են, այդ աղքատ-մուրացիներից ոմանք փողեր ունեն, որ տալիս են տոկոսով, նոյն իսկ պարտապում են վաշխառութեամբ: Բայց դժբաղբար, նրանք յաճախ ոչ վաշխ են ստանում և ոչ էլ մայր-գումարը, որովհետև նրանք փողը տալիս են ծածուկ, առանց մի որ և է պարտագրի: Բայց երբ պարտագրերը նրանց փողը հաւաքի մի պէս անուշ են անում, ուրախանում են, աղքատները ոչինչ չեն անում՝ դժուար դէմ է լուծւում են, նրա համար, որ եթէ հրապարակապէս պահանջելու լինեն, գուցէ ոչ որ չը հաւատայ նրանց, առաքելով, թէ աղքատին որտեղից է փողը, որ պարտք տայ ուրիշին, իրանից ունեւորին...

որ առջևից ու ետևից հրացանները պայ-
թոց լսեցին: Դրանք առաջակներն էին, ո-
րոնք երկու մասի բաժանված, դարան մտած՝
իրանց մէջն էին առել երեք ընկերներին՝ գնդա-
կանք անելու համար: Բայց Մանասի ընկեր-
ները չը վնասեցան: Ղրբը բռնած, թիկունքը-
թիկունքը տուած պատասխանում էին նրանց
կրակին ոչ սակաւ արագութեամբ: Սկզբից էր պա-
տերազմ բառի բուն նշանակութեամբ: Հարա-
բեցի մի գիւղացի տեսնում է այս բոլորը, շտա-
պով հեծնում է ձին և Հին-Փաղար հասնում ու
հասկանում գործի եղելով: Մանասին:
Մանասը խելոյն ճանապարհով է ընկերներին
օգնելու: Կարծ տեսց բաւական երկար և թէն
արձակած գնդակները ոչինչ վնաս երկու կող-
մին էլ չը հասցրին, բայց կրեք հայերի դրու-
թիւնը կրիտիկական էր դառնում: Եթէ կէս
ժամ ևս այսպիսի տաքութեամբ կարել շարու-
նակվէր, անպատճառ պաշարվածների փամ-
փուտները կը սպառվին և նրանք ոչ թէ գնդ-
ակահար կը լինէին, այլ սրբախղիղով: Հայերը
այս բոլորը շատ լաւ էին հասկանում, թէ և ի-
րար քաջակերելով է ժողովրդի սիրուն գոհվե-
լուց ոգևորվելով՝ յամառութեամբ պայտապանվում
էին ու կրակում: Այս միջոցին էր, որ միւս կող-
մից մի ծանօթ հրացանի տրաքոց լսեցին: ա-
մենք բնազդեամբ կրկնեցին՝ «Մանասն է, Մա-
նասն է»: Եւ ճիշտ որ հասնողը Մանասն էր:
4—5 անգամ իրար ետևից կրակեց հրացանը և
առաջակները, զգալով վերահաս փոստից, Մա-
նասի օգնութեան հասնելը, փախուստի դիմե-
ցին: Բայց նրանցից մէկին վիճակված էր մեռ-
նել Մանասի անչոյ գնդակից: միւս երկուսը
վրաուրվեցին հայերի գնդակներից, իսկ մնա-
ցածները այնպէս փախան կորան, որ կարծես
թէ այն օտարիկը չին, որ մի քանի շարակ ա-
ռաջ աւարտութիւններ էին անում և առանց
պատի մնում: Գաւառական իշխանութիւնը ի-
մացաւ այս բոլորը և գնաց տեղնուտեղը
մանրամասնօրէն տեղեկանալու: Կուր մասին
Կարծում ենք, որ Մանասի և իր ընկերները ա-
հից փոքր ինչ կապանով շինականներ կեան-
քը ու կարողութիւնը:

Բ. Տ. Ստեփանեանց

ՆԱՄԱԿ ԱՍՈՒՑՈՒՄԻՑ

Մարտի 20-ին
Ուժը տարի քաջակալութիւնից յետոյ, սրբան
սենյակի յիշողութիւններով տողոված, ցանկա-
նում էր տեսնել իմ սիրուն ծննդավայրը: Կարճ
էր իմ երջանկութիւնը: հիասթափուած աւելի
չուտ հասաւ, քան հոգեզայտութիւնս: Երիտա-
սարդութիւնը ցերեզման և անկապ, ղեկավար-
ներն առանձնացան: Կապ և համբարալուծիւն
չէ կարելի նկատել նրանց մէջ, կարծես թէ չը
կան նրանք: Քսու բանասերութիւն առատ, իսկ
գործողներ միաւորել յոյ, կամ նախաձեռնու-
թիւն ոչ որ չէ փտանալու ստանձնելու: Հա-
սարակութիւնը աղքատացած և զինեմութեան
մասնակց: մի մասը, պարագայով թիւր նա-
խադաս համարելով, առաւօտից մինչև երեկոյ,
նարդիլ, թղթախաղի, լոտոի շուրջը բոլորված՝
միջնացում է օրը: մի մասը ուսումնասիրում է
չլիքիրութեան արձեարը: կայ և մի մաս, ճըշ-
մարտի թէ կեղծ ինքնպատկաններ, դրանք ա-
մենքից ողորմելիներ և վտանգաւորներն են:
Իսկ թէ ինչից են առաջացել այս տխուր ե-
րկոյթները, առիթ կունենամ մի ուրիշ անգամ
պարզաբանելու:

Առ այժմ պարտք եմ համարում հրատարակել
և մի քանի գեղեցիկ կարգադրութիւններ, որ
սահմանել է տեղական օստիկանական վարչու-
թիւնը: Կիրակի և տօն օրերին պարտաւորված
գոցվում են բոլոր խանութները մինչև կէս օր,
(բացառութիւն են կազմում մասվածաների,
հայալուծաների, թէյ, սուրճ և կերակուր վա-
ճառողների խանութները): Այդ ժամանակ դրա-
զետներ մի խումբ յամառում է Բարեգործա-
կան ընկերութեան ընթերցարանը, մի մասը
կենդանի և մեծ մասը սրճարան, կամ լաւ է ա-
սել բարդախնդիրները որքը, որ նարդիլ,
թղթախաղը, զովնո, բլլախաղ և այլ բարդա-
խաղեր վարեցնում են նրանց և մեծ մասամբ
աղի արջուց թափելու առիթ լինում նրանց
ընտանիքին: Գիշերները ժամը 10-ից գոցվում
են նոյնպէս խանութները: բայց արտօնութիւն
ունեն վերև յիշված որքը: մինչև լուսաբացին
զաղտնի պատուարներ թղթախաղներն և նը-
րանց վճարած տասանորդներով շահվելու: այդ
մասին հարկ է, որ օստիկանութիւնը բոլոր ու-
ղարկութիւն դարձնէ, եթէ նա բարեկամ է
ժողովրդի բարեկեցութեան:

Ա. Ա.

ՆԱՄԱԿ ԽՐԱՍԳՐՈՒԹԵԱՆ

Նրբան, մարտի 18-ին

Խոնարհաբար խնդրեմ տեղ տալ հետեւեալ տու-
ղերին:
Նրբանի հայ հասարակութեան անդամների
միաձայն որոշմամբով պ. Էմիր Տէր-Գրիգորեան-
ցի թատերասերական գործունէութեան 25-ա-
մեակը կատարելու էր ամսին 28-ին, որի հա-
մար ընտրված մասնաժողովը արդէն սկսել էր
իր նախապատրաստութիւնները: բայց ներկա-
յում, մեղանից միանգամայն անկախ պատճառ-
ներով, ստիպված ենք յետաձգել մի առժամա-
նակ այդ առիթով կատարելը թատերական
ներկայացումն ու հանդէսը:

Այդ մասին մասնաժողովի կողմից պատիւ
ունեն յայտնել ինչպէս բոլոր թատերասերներին,
նոյնպէս և պ. Տէր-Գրիգորեանի հեռաւոր բարե-
կամներին, ծանօթներին և համակրողներին

Անդամ մասնաժողովի՝

Յովհ. Ղորղանեան

ՆԱՄԱԿ ԽՐԱՍԳՐՈՒԹԵԱՆ

Գանձակ, մարտի 16-ին

«Մշակի» № 47-ում կարդացի Գանձակից հա-
գորդված մի լուր՝ այստեղ ուղարկված քննիչ-
ների առիթով: Լրի մէջ, ի միջի պայտ, ասված է.
«Առաջին քննիչը ոչինչ չտեսց և ոչ էլ զրեց:
Իսկ այս երկրորդ քննիչը լաւը մեք է համա-
րում: Յետոյ, ամսին 7-ին Ս. Լուսաւորէն ե-
կեղեցում իմ խօսեցած քարոզից բերված է մի-
այն հետեւեալ կտորը:—յանցանքը պէտք է ներել
նոյ և կատարած լինի, ինչ ժամանակ և ինչ տեղ
ուղարմ է լինի: Այս է ներել ոչ թէ հրապար-
ակելով, այլ դադարել, քանի որ հրապարակով
ներելը ցաւի վրա ցաւ կաւեցանքին: Ետո ճիշդ
է նկատել լրատուն, որ ես լաւը մեք եմ հա-
մարում, երբ խաբելու պէտք է զգացվում, կա-
կարծանք ես: Այս, ինչ քանի մասին որ ես
կարծեմ եմ գրում գրելու գրում եմ. և որտեղ
իմ քա՛նայական կոչումը պարտք է դնում վրաս
խօսելու խօսում եմ: Եւ առհասարակ զէմ եմ
անկարծութեամբ, մեղեդութեամբ, համոզով
լինելով որ «ժամանակ վառնելը» գործիւն է.
ժամանակ գործ ածելը՝ կեանքը:

Կը ների ինձ լրատուն, եթէ ասեմ որ, պատե-
լով իր ներկայութեամբ իմ քարոզը՝ նա մի որոշ
նպատակ է ունեցել՝ իմանալ թէ ես իբրև յայտ-
նի գործի քննիչ՝ ինչ եմ ասելու կամ ակնար-
կելու քարոզիս մէջ: Սակայն սխալվել է. որով-
հետեւ ես շատ հեռու եմ քննիչը գործը՝ հրա-
պարակական քարոզի նիւթ շինելուց, երբ մա-
նասնից նա չէ վերաբերում մասնաւոր անձնա-
ւորութիւններին: Մի և նոյն ժամանակ գիտեմ
զանազանը քանանա՛նք քննիչից: Եւ հէնց այդ
քանում ունկնդիրներին համոզելու համար՝ ես
քարոզիս նիւթ ընտրել էի ապաշխարութիւնը,
որի մէջ ընկանաւարք մտնում են՝ յանցանքը և
նրան քաւելու միջոցները, ինչպէս արժանաւոր
է մեր եկեղեցին, ինչպէս քարոզում է քրիստո-
նէական կրօնը: Այս պատճառով էլ կամենալով
ցոյց տալ ժողովրդին թէ ինչ բարձրութիւնից է
նայում քրիստոնէական վարդապետութիւնը ըն-
կերով յանցանքներ ներելու սուրբ գործի վրա,
հետեւապէս ինչ վեճանքութեամբ պէտք է վե-
րաբերվի վրա որանք կողմը դէպի վրասար-
դը՝ ասել եմ. «ինչ որ կարելի է ներել առանց
վկայի պէտք է ներել առանձին, սրտազէտ Աս-
տուծոյ առաջը: Եթէ ներում էք մի յանցանքը,
պէտք է ներել բոլոր յանցանքները. եթէ նե-
րում էք մի հակաաւորով, պէտք է ներել
հէնց ամենքին: Ան այսպիսի ներումը կը վնասի
կատարելի ներում: Սակայն այս խօսքերը Գան-
ձակում արտասանվելուց շատ առաջ՝ տպված է
«Պարզ քարոզներ» ք. գրքերի 62-րդ երեսում:
Իսկ եթէ լրատունը չը գիտէ թէ ես դրանով ինչ
էի ուղում հակակցել՝ այդ նրանից է, որ նա
ընդհանուր քնաւորութիւն ունեցող մտքերի մէջ
մասնաւոր միտումներ է եղել փնտելիս:

Էմանուէլ քա՛ն. Նազարեան

ՆՈՒՑՈՒՄԻՑ

Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատարը,
կառավարչապետի օգնական գեներալ Լէյտն-
նանտ Յրէզէի կարգադրութեան համաձայն,
մարտի 22-ի գրութեամբ առաջարկել է Թիֆ-
լիսի քաղաքապետ Գ. Սահնգուլովին՝ քաղաքա-
պետական գումարներ անյայտը հանել մասնա-
ւոր բանկերից և մի և նոյն ժամանակ զգուշաց-
նում է, որ եթէ այդ առաջարկութիւնը ճշդի-
չը կատարվի, քաղաքային վարչութեան պաշտօ-
նեաները կենթարկվեն օրինական դատի:

Կ. Քէյտեր, որ ընտրված էր դուռայի նախա-
գահող այն ղեւորներում, երբ քաղաքապետը ի-
րաւունք չունի նախագահել, հրահրութեան
պատճառով հրաժարվում է այդ պաշտօնից: Կ.
Քէյտեր ունտրվում է արտասահման բժշկվելու
համար:

Բորչալուի գաւառի վարչութեան աշակցելու
նպատակով, «Կառնա» լրագրի ասելով, ուղարկ-
վում են այնտեղ 10 կոպակ: Գաւառը պէտք է

բաժանվի զանազան մասերի և այնտեղ պէտք է
նշանակվեն զօրքեր վարչութեան կարգադրու-
թիւնները ի կատար ածելու համար: յիշած տասն
կողակները պէտք է մնան գաւառամասերի գը-
լաւորների մօտ:

Թիֆլիսի քաղաքային դուռան իր մարտի
22-ի նիստում ընտրեց քաղաքապետի տեղապա-
սու պրավար անդամ Ս. Եստաօօվին 23 պի-
տակ ընտրվելով 21 սևի: Ինչպէս յայտնի
է, այդ պաշտօնը առաջ կատարում էր Ա. Ի-
վանենկօ:

Մեղ խնդրում են յայտնել, որ ձրի և էժանա-
զին ճաշարանի օգտին փետրվարի 27-ին սըը-
ված երեկոյթից մնացել է զուտ արդիւնք 1681
բուբլի 95 կոպէկ: Այդ գումարը կազմվել է հե-
տեւեալ կերպով. մուտք եղել է՝ տոմսակներ վա-
ճաւելուց 1297 ր. 10 կ., բուֆէտից 145 ր. 20
կ., պատից 350 ր. 50 կ., պրէմիաներից 323
ր. 50 կ., իսկ ընդամենը՝ 2,116 ր. 30 կ.:
Ծախս եղել է՝ մարկաների 50 ր., երեկոյթի և
երաշտութեան ծախս 130 ր., աֆիշ, տոմսակ
տպելու և նոտաներ արտադրելու 31 ր. 90 կ.,
բուֆէտին 50 ր. 15 կ., պատի և բիտիի 125
ր. 30 կ., պ. Մարկոսուն 25 ր., դաշնամուրի
տեղափոխութեան և ժողովարանի ծառաներին
22 ր.: Ընդամենը 434 ր. 35 կ.: Երեկոյթի
կառավարչները շնորհակալութիւն են յայտ-
նում մասնակցող անձանց և «Կառնա», «Но-
вое Обозрение», «Тифлисский Листок», «Մշակ»
ու «Նոր-Վար» լրագրիները խնդրութիւններ
բնի, յայտարարութիւններ ձրի տպագրելու հա-
մար:

ԱՍՈՒՑՈՒՄԻՑ մեզ գրում են. «Տարախոսիկ
հրահրութիւններ, մասնաւոր սկզբաւորանա
(սկուսոյ) շատ են տարածված երեխաների
մէջ: Հիւանդութիւնների առաջն առնելու հա-
մար, քաղաքիս հին մասում կրկին բացվեց խօ-
ւրբայի ժամանակ շինված փայտաշէն հրահրա-
տոցը, որտեղ ժամանակաւորապէս տանում են
հրահր երեխաներին բժշկելու համար:

ՂԱՂԱՐՑ մեզ գրում են. «Ձը նայած որ Ղը-
լարի Մարդասիրական ընկերութիւնը սկզբից
պիտի հոգ տարած լինէր Ղըլարում մի ընթեր-
ցարան բանալու, բայց լաւ է ուշ քան երբէք,
այժմ գոնէ ընկերութեան անդամները լրջօրէն
մտածեն ընթերցարանի բացման համար, որով-
հետեւ ընթերցարանի պահանջը մեծացել է: Ըն-
թերցարան բանալով. Մարդասիրական ընկերու-
թիւնը գրադէտ երկուստարդներին կը հանէ բլի-
արդիների տները և կազատէ փողոցներում շրջե-
լուց: Ընկերութիւնը միջոցներ ունի ընթերցա-
րանի համար, մասնաւոր այս տարի, երբ պ.
Ռ. Միշկելեանցի ջանքերով կայացած պարա-
հանդէսից արդիւնք մնաց 600 բուբլիս:

ԱՍՈՒՑՈՒՄԻՑ մեզ գրում են. «Ահա մօտ
վեց ամիս է, որ մեր գաւառը կառավարում է
Ի. Ի. Կոնոնով, և այդ ժամանակամիջոցում գա-
ւառապետի պաշտօնակատարը բաւական բարե-
փոխութիւններ է մտցրել վարչութեան և գը-
ծակարութեան մէջ, ի հարկէ, իր կօմպոտեն-
ցիայի սահմաններում: Պ. Կոնոնով առանձին
ուշադրութիւն է դարձրել գիւղական իշխանու-
թիւնների ղեղձումներ և վախառուների շահա-
տակութիւնների վրա, որով մեծ գոնութիւն է
պատճառել ժողովրդի ճնշվող մասսաներին: Յու-
տով ենք, որ նա եւանդով կը շարունակէ վաչ-
խառուներին սանձաւարելու գործը:

ԱՍՈՒՑՈՒՄԻՑ մեզ գրում են. «Ընդանակները
մեղանում այս տարի սովորականից դուրս տաք
են: Պարզ օրերին այնպէս տաք է լինում, որ
մարդիկ ստիպված են առանց վերաբերուի մն
զար:»

ԳՐՈՒՑ մեզ խնդրում են տպագրել հետեւեա-
լը. «Անդրկովկասեան ուսուցչական սեմինարի-
թի տեսուչը, կամենալով պարտաստել այդ հիմ-
նարկութեան քանհինգամայն գոյութեան պատ-
մութիւնը, դիմել է սեմինարիայի նախկին աշա-
կերտներին, խնդրելով հաղորդել մի քանի տեղե-
կութիւններ իրանց գործունէութեան մասին
մանկավարժական ապագրելու: Տարական
զպրոցների ուսուցիչները, անկասկած, կը յար-
գեն իրանց alma mater-ի ղեկավարի համակրե-
լի լինելը և չեն զլանայ հաղորդել նրան հար-
կաւոր տեղեկութիւններ, որոնք կարող են պար-
զել ժողովրդական կրթութեան վերաբերեալ շատ
կարեւոր հարցեր:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վատիկանեան շրջանները այնտուժ են
հերքել պապի առողջական դրութեան մասին
տարածված երկիւղալի լուրերը: Կրտսեայնուսա-
պէս «Ստեֆանի» գործակալութիւնը հաղորդում
է, որ պապի օյմերը օրից օր կաղարկում են.
լաւ է կերակրում նա. մտաւոր ընդունակու-
թիւնները չեն թուլանում: Եւրաթ առաւօտեան
պապը անձամբ պատարագ մատուցեց և ոտի
վրա էր կանգնած առանց օտարի օգնութեան:
Կարծում են, որ Ձատիկից յետոյ մտաւկայ կի-
րակի օրերից մէկում նա պատարագ կը մատու-
ցանի ս. Պետրոսի եկեղեցում:

Վօնսառտեան դըսի որդին, պրինց Արտուր,
որը Կորուզ-Փօթայի գահի թագաժառանգ է
ճանաչված, եկող տարի դուրս կը գայ Իտոնեան
գաղութից, ուր նա այժմ լուսում է առնում, և
կուղարկվի Կերմանիս իր կրթութիւնն աւար-
տելու համար: Երկու տարուց յետոյ նա կը մըտ-
նի գերմանական զօրքի շարքերի մէջ:

Հրապարակաւսօս դօկտոր Իզրաէլս, միջազ-
գային հարցերի յայտնի մասնագէտը, «Amsterda-
mer» լրագրի մէջ քննում է Հաագայում լինե-
լի կօնֆէրէնցիայի հարցը և դիմում է փոքր պե-
տութիւններին՝ առաջարկելով նրանց դաշնագիր
կապել միմեանց մէջ մշտական միջնորդ դատա-
րան ունենալու մասին: Հաագայի կօնֆէրէն-
ցիայի բացման ժամանակ Հօլանդիան, Բելգիան,
Լիւքսեմբուրգը, Պորտուգալիան, Շվեյցարիան,
Յունաստանը, Իտալիան, Իսպանիան, Եվրոպան
և Նօրվեգիան միտրտար են մի որոշուժ կա-
պցնել, որպէս զի նրանց մէջ սկսվող բոլոր վի-
ճելի հարցերը ենթարկվին միջազգային դատա-
րանի վճռին:

Ապրիլական կառավարութիւնը, գրում է
«Berl. Tagebl.» լրագրի Մարդիկ թղթակցը, —
թշնամայրեց իր դէմ կօնսիւններից վերադար-
ձած զօրքերին նրանով, որ չէ տալիս նրանց
առիկ: Առաջ միջոցներ չը կային, բայց շուտով
յայտնի դարձաւ, որ Մարդիկ բանկերից մէկը
առաջարկեց պետութեանը 30 միլիոնի փոխա-
նութիւն վերադարձած զօրքերին բաւարարու-
թիւն տալու համար: Ամենքը գո՛հ էին, բայց երբ
փողերը գանձարան մտան, կառավարութիւնն
առաջարկեց կամ սպանել, կամ պատերազմում
անցկացրած իւրաքանչիւր ամսվայ համար 5
պէսէտ ստանալ և հրաժարվել ապագայ որ և է
պահանջից: Այդ կարգադրութիւնը այնպիսի
զգոնութիւն յարուցեց, որ անցեալ շաբաթի,
նախկին ղինտոնների մի խումբ, թուլ 150
մարդ, գնաց պրէֆէկտի մօտ փողը պահանջելու,
և բաւարար պատասխան չը ստանալով, կամե-
նում էր գնալ դէպի թագաւորական պալատը,
բայց օստիկանութիւնը վրա հասնելով, արգելեց
նրանց մտադրութիւնը, կալանաւորելով մի քա-
նիսներին և ցրվելով մնացածներին:

ԽՈՒՑՈՒՄԻՑ

«Правит. Вѣсти.» լրագիրը ապել է ցուցակ ա-
մենահին պարբերական թերթերի: Ամենահին
լրագիրը, լրագրի խօսքով, Պէկինում այժմ հրա-
տարակվող «Տընգ-Րաօ» ամսագիրն է: Տընգ-
Րաօ կը նշանակէ (Տեսութիւն):

Աւելի քան տասն և չորս դար է արդէն, որ
լոյս է տեսնում այդ ամսագիրը: Չինաստանում
ամենօրեայ լրագրիները ամենահինն է «Վին-
Պան» և հրատարակվում է տասն և մէկ դար:
«Տընգ-Րաօ» ամսագիրը լոյս է տեսնում ամիսը
մի անգամ, և նրա ընթերցողները շրջանը, որ
զինաւորապէս քաղաքացած է զինականներից,
շատ սահմանափակ է: «Վին-Պան» լրագիրը մաս-
նաւոր է գրադէտ մարդկանց սեփականութեան
հասկացողութեանը: Առաջ այդ հրատարակու-
թիւնը ամիսը մի անգամ էր լոյս տեսնում,
յետոյ շաբաթաթիւնով լոյս է տեսնում օրա-
կան երեք անգամ՝ առաւօտեան, կէսօրին և
երեկոյեան: Երօպակալ և ամերիկական սեմ-
նօրեայ թերթերից աւելի վաղ «Վին-Պան» իր
իւրաքանչիւր հրատարակութիւնը լոյս էր ըն-
ծայում առանձին գոյն ունեցող թղթով, — առա-
ւօտեան հրատարակութեան համար — դեղին,
կէսօրվայ — սպիտակ, իսկ երեկոյեան — վարդա-
գոյն: Իր մօտ հազարամեայ գոյութեան սկզբնե-
րում «Վին-Պան» լրագիրը խուսափում էր որ և
է պօլեմիկայից և մինչև անգամ որ և է դատո-
ղութիւնից ընթացիկ հարցերի մասին: Նա բա-
ականանում էր միայն հաղորդելով օգեկոյթի մա-
քանական տեղեկութիւններ, նկարագրում էր
կրօնական տօնախմբութիւնները և դանազան
ծիսակատարութիւններ, իսկ իր պօղոքամին մի
փոքր կենդանութիւն տալու համար ժամանակ
առ ժամանակ տալիս էր իր ընթերցողներին
բանաստեղծութիւններ, առակներ, լեզուական:
Վերջերս լրագիրը սկսեց խօսել և քաղաքական
հարցերի մասին, բայց միշտ մեծ զգուշութեամբ:
Տասն և մէկ դարերի ընթացքում «Վին-Պան»
լրագիրը ոչ մի անգամ չէ շեղվել

տոնապէս տեղեկացրին Տեանցդինի բրիտանական հիւպատոսին, որ ծովափի վրա նորերս բացված Չիվանտաո նաւահանգիստը տրված է չինական մերձաւոր շինող և լեռնագործական ընկերութեանը: Այդպիսի միջոցը նաւահանգիստի բացմանը ֆիկտիվ կերպարանք է տալիս, որովհետև նա տալիս է ընկերութեանը բազմամասնայ իրաւունքներ:

Գերմանական միտիայի և ցղունգ-լի-եամբերի մէջ բարեկամական յարաբերութիւնները շարունակուում են, չը նայելով այն փաստի վրա, որ զինաւորված գերմանական զորաբաժինը գնում է չինական ցամաքով: Իտալու գրաւելու համար: Յայտնի է, եկան արդեօք այնտեղ այդ զորաբաժինը թէ չէ: Չինական աղբիւրներից հաղորդում են, որ ոչ մի գիտադրութիւն չէ վրնում:

Սրէկ Լի-Խունգ-Չանգ երկար ունկնդրութիւն ունեցաւ կայսրուհու մօտ. նրան ցոյց տուեցին մեծ յարգանքներ:

Պէկին: Իտալուից ոչինչ տեղեկութիւններ չեն ստացվել, որովհետև այդ քաղաքի հետ հեռազրկան յարաբերութիւններ չը կան: ՎԵՓՈՒՅԷ կանգնած է Անգլո-գրեկի մօտ, որտեղ կայ լաւ նաւակայան: Չինական կառավարութիւնը Կիանտչաուի հարևան տեղերը զօրքեր է ուղարկել օտարահպատակներին պաշտպանելու համար: Գերմանական կառավարութեան բռնած զէրքը այստեղ ընդհանուր հաւանութիւն գրտաւ, որպէս միակ միջոց չինացիներին ներքնից յարգանք դէպի օտարահպատակները դրքը և անձը: Այնու ամենայնիւ այդ ամբողջ միջնադէպերն փոքր քաղաքական նշանակութիւն են տալիս:

Կ. ՊՈԼԻՒՍ: Թէվտիկ փաշա, որը վերադարձել է Յէտինայից, և որը յանձնել էր իշխանին սուլթանի կողմից ընծայած դրօշանաւը, ձերբակալված է և նրա ընակարանը խուզարկութեան է ենթարկված:

ՊԱՐԻՉ: Ռուսաց դեսպան Չինովիեով գնաց Պետերբուրգ երեք շաբաթով, յանձնելով դեսպանատան կառավարութիւնը Նարիշկինին, իբրև գործերի հաստատմատար:

ՄԱԿՐԻԻ: «Heraldo» լրագրի տեղեկութիւնների համեմատ, մի քանի միջնատրներ որպէս թէ կրաւորական ճնշումներ են գործ դնում Վիլյամքերլէյի նախագծերին: Չինուորական և ծովային միւլտարներ ոչ միայն չեն համաձայնվում իրանց բերդեաները կրճատել, այլ և պահանջում են աւելացնել ծախսերը:

Հավանայից հաղորդում են, որ զիշքը այսրվել է Մատինցատում սպանիական կուրբի շինութիւնը:

ԲԵՐԼԻՆ: Ստատու-տեղեկատար Բիւլով, կրճատելով իր արձակուրդը, վերադարձաւ այսօր Բերլին և երկար խորհրդակցութիւն ունեցաւ անգլիական դեսպանի հետ:

23 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Կովկասեան զօրքերից երկու կորպուս է կազմվում, որոնցից տուայինը կանաւովի 1-ին կովկասեան արմէական կորպուս, որը կունենայ վարչութիւն Ալէքսանդրօպօլուսի, բայց թող կը տրվի այդ վարչութեանը մնալ թիֆլիսում: Երկրորդ կորպուսը կանուանվի 2-դ կովկասեան արմէական կորպուս:

ՕԻԷՍԱ: «Տաւրուս» շրջանաւր վնասված չէ, և այսօր նա ճանապարհ ընկաւ դէպի Վլադիվոստօկ:

ԹԵՐՈՒՍԻԱ: Մի քանի լրագրիւններում տպված այն հեռագրիւնները, թէ Կրէյֆուս ֆիրման դադարեցրել է իր օպերացիաները, սուտ են և ոչինչ բանի վրա չեն հիմնված: Հետեւեալ հերքումը խնդրում եմ հրատարակել: Ֆիրմայի ներկայացուցիչ Չինգէր:

ԱԹԷՆՔ: «Ատոս» լրագիրը հաստատ աղբիւրից լսել է, որ միջնատրութիւնը հրաժարական տրուեց պատգամաւորների ժողովի յանձնաժողովի այն մեծի պատճառով, որով Չախիսի ընտրութիւնը անվաւեր ճանաչվեց: Միջնատրութիւնը իշխանութեան զեկը իր ձեռքը կը պահի մինչև այն ժամանակ, երբ պատգամաւորների ժողովը կը յայտնի իր կարծիքը քաղաքականութեան ապագայ ընթացքի մասին:

ԱԹԷՆՔ: Ներքին գործերի և դիւտորական միւնիստրները հերքում են միջնատրութեան հրաժարականին վերաբերեալ լուրերը, որոնք, սակայն, ըստ երևոյթի, արժանահաստ են: Խօսում են խնդրական միջնատրութեան մասին, Գիլգիթօրիսի գլխավորութեամբ, որովհետև մեծամասնութիւնը, Թէօթօկիսի ղեկավարութեամբ, հեռացրված է, բայց հիշքը դեռ ոչինչ յայտնի չի չէ: Ճգնաժամը երկարատև կը լինի:

ՎԱՇԻՆԿՏՈՆ: Գնեբրալ Օտիս հեռագրում է Մանիլայից, թէ բոլոր նշաններից երեւում է, որ ֆիլիպինցիները կառավարութիւնը կրտրական դրութեան մէջ է գտնվում: Ֆիլիպինցիները ջարդված են, լքեալ և ցրված. նրանք վերադառնում են իրանց քաղաքային ընակարանները: Այն տեղերը, որոնք գտնվում են Մանիլայի և Մալոյօսից դէպի հիւսիս գտնվող կէտերի մէջ, մինչև ուր հասնում էին ամէրիկական տեղեկագրերը, ամէրիկացիները հովանաւորութիւնն են խնդրում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Նշանակված են կովկասեան արմէական կորպուսի հրամանատար զինբարլէյտեանտ Ձէզլեան—կովկասեան արմէական 2-դ կորպուսի հրամանատար. 29-դ հետակ դիվիզիայի հրամանատար զինբարլէյտեանտ Իշխան Ամիրաջիբով—կովկասեան արմէական 1-ին կորպուսի հրամանատար:

Խմբագիր՝ Ա.Լ.ՔՍՍՆԻԻ ԲԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒԶԻ ՏԻԳՐԱՆՆԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՎԱՍՏԱՆՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.Ս.ՁԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒՆԻԳՈՒՆՈՑ
Բ. ՆԱՌԱՍԱՐԻՆՆԱՆ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

Ա. Ի. Ա. ՕՏՆԵՐԻՐ
Բ. Ա. ՆԱՌԱՍԱՐԻՆՆԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզուտու. 5.
Կ. Մ. ԶԻԿՈՎՍԿԻՆ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային 5.

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵՆՆԱՆ—11—12 ժ. կանանց հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻԶ—12—1 ժ. սկանզի, կոկորդի, ըմպ և կրծքի 5.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵՆՆԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երեխայից 5.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1 1/2—2 1/2 ժ. ներքին և միասնական 5.

ԵՐԵՎԱՆԵՐԻՐ
Վ. Մ. ՄԱԽՎԻՍՏԻ—5—6 ժ. ներքին և երեխայից 5.

Ա. Ն. ՇՊԱՎՈՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (եկեղաբուժութիւն), վեներական և մորթի 5.

Բ. Ա. ՆԱՌԱՍԱՐԻՆՆԱՆ—6 1/2—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԿԻՆԿՈ հիւանդանոցումը քիմիական և խոչորացուցական հետազոտութիւններ է աւնում մէկի, լսի, արևան, կաթի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (Կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցի վերատեսուչ՝
113—150 Բժշկապետ ՆԱՌԱՍԱՐԻՆՆԱՆ

Հ Ր Ա Ի Ե Ր

Ամսիս 28-ին, կիրակի օրը, առաւօտեան 11 ժամին, Էլմիաճնեցւոց Ս. Գէորգ եկեղեցում լինելու է Մանաժողովի անդամների ընտրութիւն, յիշեալ եկեղեցոյ կաթուղիկէի և տանիքի հնութիւնները վերանորոգելու համար. ուստի սրանով յայտնում եմ մեծապատիւ պ.պ. Եւսականներին շնորհ բերել նշանակեալ օրը եկեղեցի՝ որպէս ծխական մասնակցելու ընտրութեանը:

Գործակալ ք. մասին ՏՖիխտյ՝
Գրիգոր քահանայ Մանդակունի
(չ. շ.) 1—2

ԿԱՖԷ ԶԻԼԼԵՐ

(Café Siller)
Վիէննա, I. Laurenzerberg. մեծ և էլէկանտ կաֆէ, բազմաթիւ հայ և ուսու լրագրիւններով. գալիս են բոլոր հայ և շատ օտարականներ: Ընտիր սուրճ և լաւ ճապարկութիւն:
25—25

Կովկասի ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

գրադարան-ընկերգարանը
(Միջին փողոց, տ. Տէր-Ասատուրովի, Արևելա-նեանի մագաղանի գլխին), բաց է առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 5—9: Ստացվում են մայրաքաղաքների և տեղական բարձր թերթերը: Մուտքը 2 կօպ., ամսով 40 կ. աշակերաններից կէս վճար:
24—50

„Երասրական օգնութիւն Թիւրքիայում վնասված հայերի“

Ժողովածուի խմբագրութիւնը յայտնում է ի գիտութիւն նուիրատուների, որ մինչև այժմ ուղարկված է Կ. Պոլսի ուսաց դեսպանատան 20,000 ռուբլի, «Նորայրական օգնութեան» չորս հայ-ուսական ապաստարան հիմնելու համար: Բացի դրանից ուղարկված է այնտեղ 2000 ռուբլի վանի վրայէթում քաղցած հայերի դրութիւնը թեթեւացնելու համար:

Խնարհարար խնդրվում է այն անձանց, որոնք վճարելը ունեն, կամ նուիրել են ցանկանում, ուղարկել պատով հետեւեալ հասցէով՝ Москва, Зубовский бульваръ Д. № 6. кв. 1, կամ „Русскія Вѣдомости“ լրագրի միջոցով:
1—2

Կենտրոնական գրավաճառանոցը

բաց է անում բաժանորդագրութիւն
Վ. Փ Ա Փ Ա Ջ Ե Ա Ն Ի

„Է Մ Մ Ա“

ընդարձակ վէպի համար, որ կը բաղկանայ 350—400 խոչոր երեսներից: Վէպի նիւթը երօպական հայ ուսանողների, այլ և մեր ներկայ հասարակութեան կեանքից է: Բաժանորդագրութիւնը արժէ 1 ռուբլի, իսկ գիրքը լոյս տեսնելուց յետոյ կարժենայ 1 ռ. 50 կ.: Բաժանորդագրութիւնն ընդունվում է մինչև մայիսի 1-ը: Բաժանորդագրութեան համար դիմել Կենտրոնական գրավաճառանոց: Тифлисъ, Центр книжн. торг. Уромуսаманից՝ Librairie Centrale. Tiflis.
(չ.) 8—10

„ԱՐԵՔՍ“ Ի ԽՄԲԵԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջերս լոյս ընծայած «Արքա»-ի առաջին գիրքը պարունակում է ազգային անցեալ և ներկայ կեանքին վերաբերեալ դանազան գրուածքներ— և 46 նկար, որոնցից 35-ը զուտ հայկական կեանքից:

Երկրորդ գիրքը կը հրատարակուի անհամաժամառ շքեղ նկարներով: «Արքա»-ի բաժանորդագրիւնն է 3 ռուբլի կամ 10 ֆրանկ:
Գիմել այս ապահով հասցէով՝ Петербургъ, Симеону Гуламирянцу, կամ St. Pétersbourg, Siméon Goulamiriantz.
4—5

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Մ Է Լ Ի Ք Ի Ա Ղ Ձ Ի Կ Ը

(Պատմական վէպ, 755 էրես)
Գիրք 1 ԲՈՒՐ. 30 ԿՕՊԷԿ (սովեկազմ 2 ռուբլի)

Ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ—Տեղիական մօտ («Մշակի» խմբագրատանը) և Կենտրոնական գրավաճառանոցում ՇՈՒՇՈՒՄ—Բարբառ Տէր-Սահակեանցի գրավաճառանոցում:— ԲԱԳՒՌՈՒՄ պ. Ներսէս Դաւթեանցի մօտ, Ա. Ի. Աղաժօլի գրասենեակում:
Հեղինակի հասցէն՝ ТИФЛИСЪ, редакция „Мусагъ“.
5—10

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ—ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է երթեկեկ, կիսամյակաւոր և գիրքովիկ աշակերտներ: Պատրաստում է գրի մագաղաններ, կաղնի տներ, կորպուսներ, դեմիւլէ մէրներ, բէլալական և այլ ուսուցիչ արարանների համար:
Փոքր պատրաստակաւում երեխաները ընդունվում են առանց ընտրութեան, վեց տարեկանից սկսած: Ուսուցիչ արարանում ուսուցանում են բարձրագոյն ուսուցիչ աւարտած մասնագէտներ, գրի մագաղանական ուսուցիչներ: Աւանդելի աւարականներ են կրօն, ուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, թուարանութիւն, աղբերգ, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն (ուսաց և ընդհանուր), ընական գիտութիւն, նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն, երաժշտութիւն:
Նոյնտեղ ընդունվում են ՎՃԱԿԵՐՏՈՒԶԻՆԵՐ: Օտարաքաղաքայինների համար կան ամենայն յարմարութիւններ:
Հասցէն. ТИФЛИСЪ, ГАРОВСКАЯ ул., № 11 3-րդ գիմնապիլայի մօտ: (չ.) 6—10

ՈՒՐԲԷՆ L'URBAIN

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ, ԳՐԱՄԱԳԼԻՒԻ, ՕԺԻՏԻ, ՀԱՍՈՑՆԵՐԻ և այլն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ, առանձնաշնորհումներով հիւանդութեան և աշխատելու անընդունակութեան դէպքերում, և մասնակցութիւն ունենալով զուտ արդիւնքի մէջ չէնց ապահովագրութեան առաջին տարուց սկսած: Գրասենեակը՝ Անդրկովկասի, Անդրկասպեան երկրի, Թիւրքեստանի և Բուխարայի համար՝ գտնվում է Թիֆլիսում, Միջայլէեան փողոց, տուն Ամիրաջօլի № 103:

Գլխավոր լրագոր՝ ԲԱԳՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՕՎԻԶ ՏԵՐ-ՄԱԹԵՆՆԱՆ
Տեսուչ՝ ՆԻԿՈԼԱՅԻ ԳԵՐԱՍԻՄՕՎԻԶ ՏԵՐ-ՄԱԹԵՆՆԱՆ

Տեղեկութիւններ և բրօշուկները տալիս են ընկերութեան գործակալները կայսրութեան բոլոր քաղաքներում:
(ամս. 10, 25) 18—20